

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2019-6-7-Ա

ք. Երևան

08.07.2019թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2019 թվականի հուլիսի 8-ի նիստում քննարկեց 2019 թվականի հունիսի 10-ին արտոնագրային հավատարմատար Վահագն Պետրոսյանի կողմից ներկայացված՝ adp Gauselmann GmbH (Merkur-Allee 1-15 32339 Espelkamp, DE) ընկերության բողոքը (IR1341710) «221b Baker Street» ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

Հիմք ընդունելով Ապրանքային նշանների մասին ՀՀ Օրենքի 45-րդ հոդվածի 11-րդ մասը, Գործակալությունը որոշում է՝ ուժի մեջ թողնել մերժման մասին որոշումը «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ կարգ) 93-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների կամ ծառայությունների աշխարհագրական ծագման, դրանց որակի, բնույթի կամ արտադրողի վերաբերյալ հարցերում: Տվյալ դեպքում հայտարկված «221b Baker Street» ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան գերմանական ընկերության անունով, քանի որ այն համարվում է Լոնդոնում Շերլոկ Հոլմսի բնակության հասցեն և ուղղակիորեն մատնանշում է, որ ապրանքները արտադրված են Անգլիայում, ինչն էլ միջին սպառողին մոլորության մեջ կգցի, որ ապրանքներն արտադրված են անգլիական ընկերության կողմից:

Կոլեգիայի նախագահը նշեց, որ կոլեգիան հաշվի առնելով այն փաստը, որ հայտատուն կրճատել է խնդրարկվող 9-րդ դասի ապրանքների ցանկը կարծում է որ այդ ապրանքների համար ապրանքային նշանի գրանցումը սպառողին մոլորության մեջ չի գցի արտադրողի վերաբերյալ հարցում, հետևաբար բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ

բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանը գրանցելու մասին:

Փորձաքննության բաժնի պետը նույնպես համաձայնվեց կոլեգիայի նախնական կարծիքի հետ:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Բողոքն ամբողջությամբ բավարարել, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և «221b Baker Street» (IR1341710) ապրանքային նշանը գրանցել բողոքում նշված ապրանքների համար:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ

ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ